

Haverhill

Փետրուար 20, 1950

Հոգեշնորհ
Տ. Հմայեակ Վրդ. Ինթոյեան
Նախագահ պատ. Հոգաբարձութեան
Հէյվըրհիլի համայնքին,

Ստացած ենք տարւոյս Յունուար 21 թուակիր Զեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ Զեր նախագահութեամբ, Յունուար 9-ին, կատարուած է համայնքիդ հոգաբարձական մասնակի ընտրութիւնը եւ ներկայացնելով ամբողջական նոր կազմը, կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով են ընտրուած ու կը վայելեն ընտրողներու վստահութիւնը իբրեւ եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր ու պատուական անդամներ, այսու կը վաւերացնենք ու կը հաստատենք անոնց ընտրութիւնն ու պաշտօնները հետեւեալ կարգով.-

- | | | |
|-------|--------------------|------------------|
| Տեարք | Աւետիս Ջաղացպանեան | Ատենապետ |
| | Հրանդ Բէլէշեան | Փոխ-Ատենապետ |
| | Կարապետ Սրապեան | Ատենադպիր |
| | Սերոբ Մինասեան | Փոխ-Ատենադպիր |
| | Գրիգոր Թալանեան | Գանձապահ |
| | Խաչատուր Լուսոյեան | Օգնական Գանձապահ |
| | Գէորգ Եղոյեան | Խորհրդական |
| | Վազգէն Կոստանեան | " |
| | Կարապետ Փոշեան | " |

Կ'օրհնենք նորակազմ Հոգաբարձութեան բոլոր անդամները եւ վստահ ենք որ անոնք պիտի աշխատին Աստուծոյ փառքին եւ մեր Ս. Եկեղեցւոյն պայծառութեան համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ, կը ցանկանք որ անոնք բոլորեն արդիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից

Վասն Առաջնորդի

Board Of Trustees
ST. GREGORY ILLUMINATOR
 CHURCH OF ARMENIA
 Main Street
 Haverhill, Mass.



ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ
 Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ
 ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ ՀԻՅՎՐՀԻՎ

213 ՆՈՒՆԱՐ, 1950

*Գրք. Վարդ-Ստեփան
 Ստեփան
 1-30-50*

ԳԵՐՕ

Տօժիւրան Եպսօ Գերսոյեան,
 Առաջնորդ Ամբրիկահայոց,
 և Կախազահ Ազգօկեղը վարչութեան,
 Ի Կիտու-Երբօ

ՄՐԸ Հայրք

Հէյվըհիլի Սօֆրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Տարեկան Ընտրական Ժողովը տեղի ունեցաւ տարւոյս Յունւար 8-ին, Եկեղեցւոյ սրահին մէջ, 30 անդամներու ներկայութեամբ: Հակառակ երեք անգամ գրաւոր ժողովի հրաւեր ըլլալուն և երեք անգամ յետաձգուելուն, նորէն կարելի չեղաւ ասկէ աւելի ներկաներ ունենալ: Կախ, մեծամասնութեամբ վաւերացուեցաւ անցնող տարւան մեր երեսփոխանին, Տիկօ Շուշանիկ Տէրտէրեանի, ընտրութիւնը:

Ընտրական Յանձնախումբի անդամներն էին՝

- Պրնօ Եղիա Մովսէսեան,
- ,, Յակոբ Պասմաճեան,
- ,, Միհրան Գասպարեան:

որոնց նոր երեսփոխանի ընտրութեան համար բերած երկանուկն էր տրուած քուէներով, —

- Պրնօ Խոսրով Պօյաճեան, 17 քուէ:
- ,, Մինաս Մօկոստանեան, 13 ,,
- Այլալէս որ Պրնօ ԽօՊօյաճեան կը նտրուի իբր երեսփոխան:

Անցած տարւան Գննիչ Յանձնախումբի անդամները նոյնութեամբ մեծամասնութեան քուէով վաւերացուեցաւ: Անոնց անուաններն են՝

- Պրնօ Յակոբ Մեղրոնեան—Մայք Ճէքսն—
- ,, Միմոն Համալեան:
- ,, Կերսէս Տօկարապետեան:

Որով քննիչ Յանձնախումբն ալ ընտրուած է յանձին այս անձերուն:

Իսկ Հոգաբարձութեան դադարեալ անդամներուն համար հետեւեալ կրկնանուն ցանկը բերուած էր: Պատօ Հոգաբարձութիւնը իր մէջ թարմ ուժեր ունենալու համար առաջարկ բերած էր, որ հոգաբարձութեան թիւը 7էն 9ի բարձրացուի, որ նոյնութեամբ ընդունուեցաւ:


Հոգաբարձութեան ընտրելեաց երկանուն ցանկն է իրենց առած քուէներով՝

Պրնօ Աւետիս	Չաղացպանեան	15 քուէ:	Պրնօ Սեդրակ	Յովհաննէսեան	11 քուէ:
,, Վազգէն	Կոստանեան	14 ,,	,, Միլտիչ	Տէրտէրեան	11 ,,
,, Գեորգ	Եղօեան	13 ,,	,, Հմայեակ	Ոսկերիչեան	9 ,,
,, Սերբբ	Մինասեան	13 ,,	,, Դաւիթ	Մարտիկեան	8 ,,
,, Հրանդ	Գեղէշեան	12 ,,	,, Սարգիս	Դաւիթեան	8 ,,
			Կեն	Պասպարեան	7 ,,

Որով առաջին շարքին վրայ եղողները ընտրուած կը ըլլան ինչպէս երբեք Պատօ Կեղը վարչութիւնը իրաւամբ առարկէ, թէ ոմանց ընտրութիւնը օրինաւոր չէ, քուէի հաշուով, պիտի պատասխանեցաւ այս ընտրութեան ատեն արդէն որս անդամ մեկնած էին: Բմնացածներն ալ կարելի չէր աւելի պահել: Գործը հրաւեր մը անդամական ժողովի բաժարձակ ձախողանք պիտի ըլլար, և ըլլալ, որով ստիպուեցանք, եղածով գոհանալ և ջեզի հաղորդել: Այս է անդամական ժողովներուն համար:

Վեհապետ

Board Of Trustees
ST. GREGORY ILLUMINATOR
 CHURCH OF ARMENIA
 Main Street
 Haverhill, Mass.



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
 Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
 ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ ՀԵՅՎՐՀԻԼԻ

-2-

Այս ընտրուած հոգաբարձուները նախկիններուն հետ ժողով գումարեցին ամսոյս 19ին և հետեւեալ կերպով ընտրեցին հոգաբարձական դիւանը՝-

- | | | |
|-------------|---------------|-------------|
| Պրնօ Աւետիս | Ջողացպանեան , | Ատե՛նապետօ |
| ,, Հրանդ | Բէլէշեան , | Փօ ,, |
| ,, Կարապետ | Սըապեան | Ատե՛խաղալիօ |
| ,, Սերոբ | Մինասեան | Փօ ,, |
| ,, Գրիգոր | Թալանեան , | Գանձահպահ |
| ,, Խաչատուր | Լուճոյեան | Փօ ,, |
| ,, Գէորգ | Եղօեան , | Խորհրդատուօ |
| ,, Վազգէն | Կոստանեան , | ,, |
| ,, Կարապետ | Փօշեան , | ,, |

Ձայտասիկ հաղորդելով Ձեզ ի գիտութիւն և ի վաւերացումն, մնամք խոնարհաբար Ձեր Սըբազնութեան Սօ Աջոյն՝

Կախազահ

Ատե՛նաղալի

Yeghayan of ...

Handwritten signature

Ատե՛նապետ

Handwritten signature

Ծանօթօ—Առաջին անդամական ժողովը տեղի ունեցաւ 18 Դեկտօ 1949ին, երբ Հոգօ Հովիւն ու Պատօ Հոգաբարձութիւնը տուեց իրենց տարեկան տեղեկագիրները:

նոզնք

Յուլի 31, 1950

Հոգեշնորհ
Տ. Համայնակ Վրդ. Ինթոյեան
Հոգեւոր հովիւ եւ նախագահ
Հայց. Եկեղեցւոյ Հէյվըրհիլի Համայնքին,

Ստացուած է ամսոյս 21 թուակիր Զեր գրութիւնը որով
կը տեղեկագրէիք Զեր Համայնքի հոգաբարձական մասնակի ընտրութեան
եւ երեսփոխանական ընտրութեան մասին:

Ցաւալի է որ Երեսփոխանական ընտրութեան մասին
Առաջնորդարանի նոյեմբեր 28, 1950 թուակիր գրութեամբ տրուած հրա-
հանգին պատշաճ կարեւորութեամբ չէք հետեւած, ուր յարկապէս
ըսուած էր թէ, - Երեսփոխանական ընտրութեան արդիւնքը պէտք է
տեղեկագրել ԱՌԱՅԻՆ ԳՐՈՒԹԵԱՄ, ուր պէտք է յիշուած ըլլայ թէ՛
Համայնքը քանի տրատու անդամ ունի, քանի հոգի մասնակցած է
ընտրութեան եւ իւրաքանչիւրը քանի քուէ ստացած են: Ուստի անհրա-
ժեշտ է որ նոր տեղեկագիր մը ներկայացնէք երեսփոխաններու
ընտրութեան, համաձայն տրուած ցուցմունքներու:

Գալով հոգաբարձական ընտրութեան, անկանոնութիւն մը
չկայ, քանի որ Ազգ. Կեդր. Վարչութիւնը ընտրութեանց ատեն փռաւելագոյն
քուէն նկատի կ'առնէ եւ ոչ թէ մեծամասնութեան, ու ի մօտոյ կը
ղրկենք վաւերացման պաշտօնագիրը, երբ ուղարկէք Զեր եւ հոգաբարձութեան
գործունէութեան տարեկան տեղեկագիրն ու ելեւմուտքի Հաշուեկշիւը,
ինչպէս նաեւ 1949-ի էջմիածնի Լումայի Զեր տուրքի 100 տոլար:

Հաճեցէք զրկել նաեւ Առաջնորդարանի 1949-ի վիճակագրա-
կան հարցարանը:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից
Արմէն
Վասն Առաջնորդի

Board Of Trustees
ST. GREGORY ILLUMINATOR
CHURCH OF ARMENIA
Main Street
Haverhill, Mass.



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ ՀԵՅՎՐԶԻԼԻ

Դեկտ. 14, 1949

Հէյվըհեւե Ս.Գրիգոր Լուսօեկեղեցւոյ Անդամական Ժողովին

1949 տարուան ընթացքին Հոգաբարձական 20 ժողովներ ունեցած ենք, մեր Հոգ. Հովուի նախագահութեամբ և մեր կարելիով աշխատած հասնիլ թեր կէեղեցիին գործերուն է ծախսերուն:

1948ի Հոգաբարձութիւնը իր տարեկան եկամուտէն աւելի ծախս ըրած էր, որովհետև եկեղեցիին համար նոր տաքութիւն և զանազան տեղեր ելեկդրական լամբեր դրաւ:

Հոգաբարձութիւնս ամէն կերպով աշխատեցաք մեր Հովիւը ձեռքէ չհանել և ուրախ ենք ըսելու որ յաջողեցանք, յայլապէս առաջուան նման առանց եկեղեցականի պիտի մնայինք:

Հոգաբարձութիւնս անցնող տարուան մէջ հետեւեալ ձեռնարկներն ունեցաւ, կամ մասնակցեցաւ և յաջողութեամբ գլուխ հանեց՝ Պաղեստինի Աղէտեալներու Հանգանակութիւն, Տարեկան Դաշտահանդէս, Առաջնորդարանի 500 մեայ Յոբելեանը հոգաբարձութեանը շարժապատկերներն ալ պատրաստելով, Տիկնանց Միութեան 10ամեակը քաջալերեց:

Միշտ հետաքրքրուեցաւ Դպրաց Դասով և Եկեղեցւոյ երիտասարդներով, որոց տրամադրեց եկեղեցւոյ սրահը:

Իր կարելիցով հասաւ Առաջնորդարանի հրահանգներուն, առանց մոռոտալու ներկայ տնտեսական դժուար պայմանները:

Անցնող տարուան ընթացքին ունեցանք գոհացուցիչ եկամուտ նուիրատուներէ, Ս. Պատարագի Պնակներէ, խորհրդակատարութիւններէ և Դաշտահանդէսէն: Այս տարի Հոգաբարձութիւնս ամէն ջանք դափեց իր արատու անդամներու թիւը շատցնել և յաջողեցաւ մինչև 167ի բարձրացնել և ատով Եկեղեցւոյ եկամուտը ապահովել: Ինչպէս նաև երկրորդ Երեսփոխան մըն ալ ունենալ:

Հետաքրքիր եղանք նաև Հայ Դպրոցով և կիրակնօրեայ Դպրոցով, սակայն կարելի չեղաւ մէկը գտնել որ յանձն առնէր այդ գործը կատարելով մեր քովիւն ալ կարելուութիւն հունը, որով այս երկու կարևոր խնդիրներ ալ մնացին սեղանի վրայ:

Հայրստուրբին առաջարկով Հոգաբարձութիւնս շափ նպատակալարմար նկատեց եղական Եկեղեցիներու պէս պահպաններ տալ հաւատացեալներուն, որպէսզի ոչ միայն այդ կերպով աւելի նպաստած ըլլայ Եկեղեցւոյ եկամուտին այլև Եկեղեցիք չեկողներն ալ ջանայ Եկեղեցի բեթել: Այս դրութիւնը պիտի սկսի յառաջիկայ ամիսէն սկսեալ:

Անդամական Ժողովիդ որոշմամբ և Առաջնորդարանի Թեւադրութեամբ Հոգ. Հովուին ամսականի մասին ալ փոքր կարգադրութիւն մը կատարեցինք:

Չամանակին և կանոնաւոր կերպով ունեցանք տարեկան երկու Անդամական Ժողովներ:

Ահա այս բոլորը, առանց աւելորդ մանրամասնութեան երթալու, կատարեցինք, մեր կարելիով և գաղութի ներած չափով ջանացինք հասնիլ մեր եկեղեցիի պէտքերուն: Այնպէս որ անցնող տարին եղաւ համեմատաբար յաջող տարի մը մեր եկեղեցիին համար:

Պատ. Հոգաբարձութիւնս կը գնահատէ մեր Հովուին աշխատանքը, իր բոլոր տրամուտ անդամներուն եկեղեցիին բերած նպաստը, ինչպէս նաև Եկեղ. Տիկն. Միութեան Դպրաց Դասի և Եկեղեցւոյ Երիտասարդներուն գործունէութիւնը և բոլորիդ կը մաղթէ կարողութիւն յաջող տարի մըն ալ բոլորեալ ի պայծառութիւն մեր Ս. Եկեղեցիին պայծառութեան և Համայնքիս հոգեկան բարորութեան և արթնութեան համար ց որով մնամք յարգանքով:

Ատենադպիր
Ատենապետ
Գրորա պե Կրուպե
Քարտի Գրուպե